ԿԻԼԻԿՅԱՆ ԴՐՎԱԳՆԵՐ

ՄԻՍԱՔ ՃԵՎԱՀԻՐՃՅԱՆ

ԼԵՎՈՆ IV ԹԱԳԱՎՈՐԻ ՎԻՄԱՔԱՆԴԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Դաշտային Կիլիկիայի Թագավորաշեն և ծովեզերյա Կոմարտիաս բերդերում պահպանվել են Կիլիկիայի Լևոն IV (1320-1341 թթ.) թագավորի մի քանի վիմաքանդակներ: Քանդակներից առաջինը գտնվում է Դաշտային Կիլիկիայի Թագավորաշեն բերդի գլխավոր մուտքի բարավորում: Այդ բերդն այժմ հայտնի է Ցըլան-կալե անունով: Կիլիկիայի հայերն այն անցյալում անվանում էին «Լևոն թագավորի շինած բերդը»: Թուրքերն այն աղավաղելով և հարմարեցնելով իրենց լեզվին, «Լևոն»-ը վերածել են «Ցըլան»-ի, որը նշանակում է «օձ», և, հետևաբար, բերդը կոչվել է Ցըլան-կալե: XIX-XX դդ. հայ գրականությունում բերդը ստացել էր Օձաբերդ անունը, որը ոչ մի առնչություն չուներ օձ բառի հետ:

Բերդի «Ցըլան» կոչվելուն նպաստել էր նաև այն հանգամանքը, որ դռան բարավորի քանդակում, հատիչի հարվածից քարի եզրի փոքր-ինչ կոտրվելու պատճառով, Լևոն IV թագավորի ձախ ձեռքով բռնած գայիսոնի ձողափայտը ստացել էր աննշան օձապտույտ դիրք: Հայ ռամիկը հետագայում Թագավորաշենը անվանեց «Լևոն թագավորի բերդը» ձևով: Դա էլ ծնունդ տվեց «Լևոն բերդ»-ին և ապա «Լևոնկլային»: Իսկական Լևոնկլա բերդը գտնվում էր Լեռնային Կիլիկիայում և ոչ մի առնչություն չուներ Դաշտային Կիլիկիայի Թագավորաշեն բերդի հետ: Վերջինս գտնվում է Մամեստիա (այժմ Միսիս) բերդաքաղաքից 4-5 կմ հյուսիս-արևելք, Ջահան գետի աջ ափի մոտ և բարձր մի քարաբլրի գագաթին: Բերդը հսկում էր Ջահանի նեղ գետահովտի անցուդարձին և արդի Սիրքելի գյուղի մոտ, Ջահան գետի վրայով կատարվող գետանցումին: Թագավորաշենը կառուցվել է 1320-1335 թթ. միջև, XIV դարի Կիլիկիայի հայկական ռազմաճարտարապետական հիմունքներով, ժամանակի պահանջներին համապատասխան, երեք շարք պարիսպներով, ահատեսիլ՝ թշնամու, և գեղեցիկ՝ տերերի համար: Ուներ ջրամբարներ, դղյակ-միջնաբերդ, մատուռ-աշտարակ և հարակից շինություններ:

Թագավորական բերդի գլխավոր մուտքի վերևի կամարի փականի քարում (պորտի քար) քանդակված է թագավորը թագը գլխին ծալապատիկ նստած, ձախ ձեռքին բռնած թագավորական գայիսոն «Ծաղիկը» կամ «Ֆլոտոիսը», իսկ աջ ձեռքին՝ «Տերունական խաչը» (նկ. 1): Գահավորակը կարճ ոտքերով և վերևը երբեմն ամպհովանիով ծածկված ասիական տիպիկ գահ էր: Լևոն IV-ի գահավորակն ունի կոկոնի և բուսական մոտիվների միահյուսմամբ ձևավորված չորս ոտքեր: Փականի քարի երկու կողմի քարերի վրա քանդակված է մեկական «Կիլիկիայի հայկական առյուծներ»՝ կանգնած դեմ դիմաց: Ինչպես հայտնի է, Կիլիկիայի ամեն մի հայ թագավորի «առյուծն» ունեցել է իր ուրույն ոճը և տարբերվել մյուսներից: Ինչպես Թագավորաշեն բերդի ամբողջությունը, այնպես էլ վիմաքանդակ կոմպոզիցիան պատրաստված է Կիլիկիային հատուկ, սովորական կրաքարից: Դարերի ընթացքում աջ կողմի «առյուծը» մաշվել ու քայքայվել է մարդկանց և բնության ներգործու-

թյունից: 1958 թ. երբ այն տեսանք, ոչ մի հետք չէր մնացել աջ կողմի «առյուծից»:

Լևոն IV-ի թագը՝ Կիլիկյան Հայկական թագավորության ընդունված թագն է: Թագավորը պատկերված է մորուքով և երկայն մազերով: Գահավորակն ամպհովանի չունի:

Պահպանված ձախակողմյան «առյուծը» պատկերված է մարդկային գլխով և առյուծի մարմնով: Նա կանգնած է ետևի երկու ոտքերի վրա: Մարդու նման խաչաձևված են առջևի երկու թաթերը: Գլխի վերևի մասում պատկերված են առյուծի երկու ականջները: Վզին կա կենդանու բաշը ներկայացնող տերևանման մի ցցվածք: Առյուծի պոչի վերջնամասը քանդակված է լայն բացված հերալդիկական շուշան ծաղկի հետևողությամբ: Այդպիսին է եղել XIV դարում հայոց Թագավորաշեն բերդի զինանշանը:



Նկար 1

Թագավորաշենի կառուցման թվականը ճշտելուն կարող է նպաստել բերդի բարավորի վիմաքանդակի կոպոզիցիան և Լևոն IV թագավորի այն մանրանկարը, որը 1331 թվականին (հավանաբար՝ Սիսում) գծել է Սարգիս Պիծակ քահանան «Անտիոքի օրենսգրքում» (գտնվում է Վենետիկի Ս. Ղազարի Մխիթարյան միաբանության մատենադարանում, ձեռ. հմր. 107) (նկ. 2): Մանրանկարում Սարգիս Պիծակը պատկերել է Լևոն IV թագավորին դատական նիստի ժամանակ: Թագավորը՝ թագը գլխին, ծալապատիկ նստած է գահավորակին ու նախագահում է ընթացող դատը: Մեղադրյալը ծնկաչոք, գեղեցիկ մի կին է: Նրա ետևում կանգնած է մի սպիտակահեր ծերունի, որի գլխավերևում գրված է «Ուղեղ»: Հավանաբար դատախազն է: Կինը հագել է երկգույն հագուստ, որը հատուկ է բանտարկյալներին: Մանրանկարի աջ հատվածում և թագավորից ցածր գտնվում են ծալապատիկ նստած երկու տղամարդիկ: Մեկը սպիտակահեր ծերունի է և մյուսը՝ մութաքայի վրա նըստած երիտասարդ և գեղեցիկ մի իշխանավոր: Թագավորից բացի, բոլորը գլխաբաց են: Մանրանկարը ներկայացնում է «Բարձր Դարպասի» մի նիստ: Երկրորդ ծերունին երիտասարդ իշխանավորի՝ հայցողի փաստաբանն է:

Մանրանկարում Լևոն IV թագավորի կերպարի և գահավորակի կոմպոզիցիայի միջև կան մի շարք ընդհանրություններ: Թագավորաշեն բերդի անունը 1335 թվականի դեպքերի կապակցությամբ հիշվել է մեկ անգամ: Մանրանկարը և Թագավորաշենի վիմաքանդակը ժամանակակից են և նույն ձեռքի գործը: Վիմաքանդակի գծագրի ձևավորումն անկասկած պատրաստել է Սարգիս Պիծակը, և բերդը կառուցվել է մանրանկարի ծաղկման նույն՝ 1331 թվականին: Այս հանգամանքն անառարկելի մի ապացույց է Թագավորաշենը կառուցողի և «Լևոն թագավորի դատաստանի» մանրանկարի գլխավոր այուժեի՝ Լևոն IV-ի նույնության մասին: Սարգիս Պիծակի տաղանդը փայլել է Օշին, Լևոն VI, Կոստանդին II, Կոստանդին III և Կոստանդին IV թագավորների շրջանում: Նա գործի բերումով ապրել է Սիս մայրաքաղաքում ու նրա շրջակա Կոպիտառա, Դրազարկ, Փոս ու Սկևռա վանքերում: Նա տեսել է այդ թագավորներին ու կատարել նրանց պատվերները: 1331 թ. կառու-

ցում է Թագավորաշենը: Այդ թվականին էլ Սարգիս Պիծակը նկարում է Թագավորաշենի դռան կոմպոզիցիան և Անտիոքի Օրինագիրքը:

Կիլիկիայի հայ թագավորների գահերը նման էին Եվրոպական երկրների թագավորների գահերին: Իսկ ինչպես երևում է, Լևոն IV-ի մանրանկարի և Թագավորաշենի վիմաքանդակի գահերը «Թախտ» են և նստվում է ոտքերը ծալած դիրքով: Այժմ հարց է առաջանում, թե Լևոն IV-ի թագավորությունը նախ ո՞ր պետության կողմից էր ճանաչվել ու հաստատվել: Քաղաքական ի՞նչ ազդակների բերումով Կիլիկիայի հայ քրիստոնյա թագավորը ստիպված էր ծալապատիկ բազմել «Թախտի» և ոչ թե գահի վրա:

Նկար 2

1307 թվականին Անավարզայում Բիլարղու Նուին մոնղոլ զորավարի կազմակերպած դավադրությունից հետո, որի հետևանքով սպանվել էին արքունի ընտանիքից քառասուն անդամներ և իշխանավորներ, Իլխանական Մոնղոլ պետության հետ թուլացել էին դիվանագիտական կապերը: Մոնղոլ սուլթաններն աշխատում էին այն վերականգնել նախկինի նման: Նրանք արևմուտքում կարիք ունեին հայոց բարեկամությանը, քանի որ Իլխանական պետությունն էլ էր սկսել անկում ապրել: Մյուս կողմից, Եգիպտոսի սուլթաններն աշխատում էին Կիլիկիայի հայկական պետությունը մեկուսացնել Մոնղոլ և Եվրոպայի Լատին պետությունների զինակցությունից ու դիվանագիտական հարաբերություններից: Մրցակցություն էր գնում մանկահասակ Լևոն IV-ի շուրջ, թե ո՞վ պիտի կարողանար իր կողմը գրավել նրան: Փաստորեն, Կիլիկիայի հայկական պետությունը 1320-1327 թթ. միջև թագավորի անունից կառավարում էին Լևոն IV-ի հորը՝ Օշին թագավորին թունավորող, խնամակալ Օշին պայլը և թագավորի մերձավոր յոթ խոշոր իշխանները: Մրցակից պետություններից ամեն մեկն աշխատում էր մանուկ թագավորին քաշել իր քաղաքական ոլորտը:

Սարգիս Պիծակի ծաղկած մանրանկարից և Թագավորաշենի վիմաքանդակից պարզվում է, որ Լևոն IV-ի թագավորությունը նախ ընդունվել է Մոնղոլ սուլթանի կողմից ու Սիս ուղարկվել Թավրիզյան «Թախտ», դրոշ և թագավորական մնացյալ հանդերձանքը:

1327 թվականից մինչև Լևոն IV-ի սպանությունը (28. VIII. 1341 թ.), անցած ժամանակամիջոցում, Եգիպտոսի սուլթանական պետության Կիլիկիա կատարած հարձակումներից և հատկապես 1337 թ. պայմանագրից երևում է, որ Եգիպտոսի իշխանությունը չէր կարողացել իր դիվանագիտական ոլորտը ներգրավել երիտասարդ թագավորին, այդ պատճառով էլ շարունակել էր ճնշման տակ պահել Կիլիկիայի հայկական պետությունը:

Սարգիս Պիծակի մանրանկարի ու Թագավորաշենի վիմաքանդակի կոմպոզիցիաների բովանդակություններից պարզվում է, որ.

1. Կիլիկիայի հայկական պետությունը 1307 թ. Անավարզայի դավադրությունից հետո ևս դիվանագիտական կապերը չի խզել Իլխանական Մոնղոլ պետության հետ:

2. Արդի Ցըլան-կալեն XIV դարի Կիլիկիայի հայկական պետության Թագավորաշեն բերդն էր, որը կառուցել էր Լևոն IV թագավորը:

3. Շատ հավանական է, որ Թագավորաշենի դռան բարավորի վիմաքանդակ կոմպոզիցիայի գծանկարը կազմած լինի մանրանկարիչ Սարգիս Պիծակ քահանան:

4. Լևոն IV թագավորի սեփականությունը եղող Թագավորաշեն բերդի զինանշանը և դրոշը պատկերվել է բերդի դռան վիմաքանդակում: Այս դրոշն ունեցել է ժամանակի հերալդիկական ոճը:

5. Կիլիկիայի հայ թագավորների գայիսոնը եղել է ֆլոտոիսը (կամ Ծաղիկը), ինչպիսին եղել է Հռոմեական կայսրության Գերման արքաներինը:



Նկ. Մամուրիյե կալեյի հատակագիծը:
Ա.. Կամարտիաս բերդ:
Բ.և Գ.. 1450 և 1484 թթ. ավելացված մասերը:
Դ.. Ծովեբերյա խութ:
Ե.. Դռնմուտ:

Նկար 3

Ներկայացվող զինանշանի և դրոշի համար որպես նախատիպ է ծառայել Ցըլան-կալեի դռան վերևի Լևոն IV-ի և «Կիլիկիայի հայկական զույգ առյուծների» բարձրաքանդակը: Թագավորաշեն բերդի Նշանը ներկայացնում ենք Ցըլան-կալեի դռան 1955 թ. կատարած մեր լուսանկարից:

Կիլիկիայի հայկական պետության շրջանից պահպանված Լևոն IV-ի երկրորդ վիմաքանդակ կերպարը գտնվում է Քարային Կիլիկիայում, արդի Անամուր շրջանի Մամուրիյե կալե կոչվող ծովափնյա բերդում (նկ. 3): Վերջինս գտնվում է Անամուր հրվանդանից արևելք, 12,5 կմ հեռու: Այդ բերդը XII-XIII դարերում կոչվում էր Կամարտիաս (Խումարտիաշ, Խումարտաշ, Խամարտիաշ, Կոմառտիաս, Camardius, Camardo և այլն): Այն եղել է Կումարտիաս կամ Կամարտիաս իշխանական տան հայրենի տիրույթը: Կամարտիասների իշխանական տան հարստությունը Քարային Կիլիկիայի Անամուր և Լամաս բերդերի միջև ուներ ծովամերձ ընդարձակ տիրույթներ: Լևոն I Մեծազործի թագադրության հանդիսավոր արարողության մասնակիցների ցուցակում Սմբատ սպարապետը նշել էր նաև «Իշխանն Նորբերդոյ և Կօմառտիասոյ սեւաստիօսն Հեռի» և նրա որդի «Իշխանն Սելեւկիոյ և Պունառոյ Կոստանցն»:

Սեբաստոս Հեռի Կամարտիաս իշխանն ամուսնացած էր Հայոց Հովհաննես VI Կաթողիկոսի քրոջ հետ:

Միջնադարյան անվանի Կամարտիաս բերդի տեղադրությունը համարվում է չճշտված, սակայն Սմբատ սպարապետի վերոհիշյալ ցուցակից պարզվում է, որ Կամարտիաս բերդը եղել էր Անամուրի շրջակայքում: Դրա դիրքը որոշելու համար կարևոր տեղեկութ-

յուն է պարունակում Կղեմես VI Պապի 1347 թվականին Հոոդոս կղզու ասպետների կարգապետին հղած այն հորդորը, ուր ասվում էր, որ պահեն Կամարտիաս բերդը: Դա նշանակում է, որ 1347 թվականին Հոոդոսի ասպետների ձեռքին էր գտնվում բերդը, և դա պետք է լիներ ծովեզերքում, քանի որ հեռավոր Հոոդոս կղզում գտնվող ասպետները կարող էին տիրույթ ունենալ միայն Քարային Կիլիկիայի ծովեզրյա վայրերում:

Անամուրի և ծովեզերյա Սիկի բերդի (այժմ՝ Սոֆտա կալե) միջև գտնվում էր մի բյուզանդական ամրոց, որի հին անունը ցարդ մնացել էր անորոշ: XV դարի 50 և 80-ական թվականներին Կարամանօղլու իշխանապետները երկու անգամ այդ ամրոցը վերակառուցումներով ընդարձակել էին, և այն այժմ կոչվում է Մամուրիյե կալե: Բերդի կառուցվածքի ոճից կարելի է հեշտությամբ զանազանել Մամուրիյե կալեի արևմտյան հատվածում բյուզանդական Կամարտիաս բերդի պահպանված հին կառույցը: Դեռ մնում է Կամարտիաս բերդի դռան բարավորի վիմաքանդակ զինանշանը: Դուռը բացվում է հետագայում (XV դ.) բերդին ավելացված մասի մեջ: Հայտնի է, որ Վերածնության նշանավոր դեմքերից Լեոնարդո Դա Վինչին 1481-ին գաղտնի հանձնարարությունով ուղարկվել էր Արևելք: Լ. Դա Վինչին նախ հավանաբար եկել էր Կիպրոս կղզի, որն այն ժամանակ գտնվում էր Վենետիկի տիրապետության ներքո: Լեոնարդոն այնտեղից այնուհետև գնում է Իսկենդերուն նավահանգիստ և անցնում Հյուսիսային Ասորիք և գնում Հալեպ՝ Մամլուկների սուլթանի կուսակալի (դավադար) մոտ: Այս տեսակցությունից հետո նա գնում է Հյուսիսային Ասորիք և Հայաստանի այլ վայրեր (Երզնկա և, հավանաբար, Արարատյան դաշտավայր): Վերադարձին անցել է Կիլիկիայով: Լեոնարդոյի ճամփորդական հատուկենտ նոթագրություններից հայտնի է, որ նա նավով եկել է Կելենդրիա (այժմ՝ Գիլինդրե) նավահանգիստ ու այնտեղից սկսել ուսումնասիրել Կիլիկիայի ամրությունները, ռազմական նպատակների ծառայող ճանապարհները, կամուրջները, լեռնանցքները և այլ կարևոր դիրքերը՝ վերանորոգումներ կատարելու նպատակով: Կելենդրիայից քիչ արևմուտք գտնվող ծովափնյա Կամարտիաս բերդն իր դիրքով հարմար էր թե՛ երկրի պաշտպանության և թե՛ ճանապարհային մի հանգրվան լինելու հանգամանքով:

Կարծում եմ, որ Մամուրիյե կալե բերդի երկրորդ վերակառուցման հատակագիծը կատարվել է Լեոնարդո Դա Վինչիի կողմից, երբ նա գտնվում էր Քարային Կիլիկիայի ծովափնյա ամրություններում: Բերդի վերակառուցման 1484 թվականը համընկնում է նրա՝ Կիլիկիայում գտնվելու ժամանակաշրջանին: Մամուրիյե կալե բերդի հատակագիծն ու ռազմա-ճարտարապետական ոճը նման է Իտալիայում գտնվող մի շարք ամրոցների ոճին: Մամուրիյե բերդի արտաքին մուտքի կողքին կա արաբատառ շինարարական մի մեծ արձանագրություն, ուր ասված է, թե «Այս բերդը [վերա]կառուցել է Հիջրայի 854 (1450) թվականին Մուհամմեդ-ալլահը, աստծու օրհնությամբ և զորությամբ»:

1450 և 1484 թվականների լրացուցիչ երկու վերակառուցումներից հետո Կամարտիաս բերդը ստացել էր այժմյան տեսքը և համարյա չի ենթարկվել որևէ ավերածության կամ փոփոխության:

Եթե Կիլիկիայի հայկական պետության XII-XIII դարերի Կամարտիաս բերդը պատկերացնենք իր արդի Մամուրիյե կալե բերդի ընդհանուր տեսքով, ապա դա սխալ կլինի: Երկու վերակառուցումներից հետո, բերդի ամբողջությունը բաժանվել է երեք անկանոն մասերի: Դրանցից մեկն է Մամուրիյե կալե բերդի հարավ-արևմտյան անկյունի միջնաբերդը, որն ամբողջությամբ վերցրած՝ հին Կամատրիաս բերդն է: Դա կառուցված է ոչ բարձր ժայռի վրա՝ մյուս երկու բաժանմունքներին իշխող դիրքով: Միջնաբերդի (Հին Կամատրիասի) միակ դուռը բացվում է երկրորդ բաժանմունքի մեջ: Այդ դռան բարավորի վրա է գտնվում Կամատրիաս բերդի XIV դարի զինանշանը (նկ. 4): Վերջինս ձևավորված է ծալապատիկ նստած Կիլիկիայի հայ թագավորի պատկերով: Նրա թագը նման չէ եվրոպական կամ քրիստոնյա այլ պետությունների ընդունված թագերին: Վիմաքանդակում պահպանված թագը ձևավորվել է երկու տարբեր ձևի թագերի համադրումից: Նկատելի է, որ թագը սովորականից շատ բարձր է: Դրա վերևի մասն ունի չորս ելուստներ, որոնք որոշ չափով հիշեցնում են Հայոց կամ Եվրոպական միապետների թագերի վերջավորությունները: Թագի ներքևի մասը, որը դրվում է գլխին, ներկայացնում է գլանաձև հյուսված կողով: Թագն ունի մահմեդականություն ընդունած մոնղոլական ավազանու «պատվավոր բարձի գլխանոցի» (ֆոթոզ, սոխտա) և հայկական թագի համադրում: Քանդակում պարզ երևում են հյուսվածքի ծակտիկները: Մահմեդական տիրակալների փաթթոցավոր թեթև գլխանոցները (թագ) ընդհանրապես պատրաստվում էին եղեգի շյուղերից հյուսված կողովաձև հենքի (կարկաս) վրա փաթաթված թանկարժեք կերպասներից:



Նկար 4

Թագավորը ծալապատիկ նստած է բարձի վրա: Խաչաձևել է թևերը: Աջ ձեռքում պահել է խաչը, իսկ ձախ ձեռքով՝ կարճ ցողունով «Ծաղիկը», այսինքն՝ գայիսոնը: Թագավորի առջև քանդակված է եվրոպական հերալդիկայի հիմունքներով կազմված անձնական զինանշանը, ֆրանսիական տիպի վահանակով և բուսական օրնամենտներից կազմված նշանացանցով (HAMET):

Ծալապատիկ նստած թագավորը քանդակված է քառանկյունի սպիտակ քարի վրա, ուստի քանդակում արտացոլված չեն Կամարտիաս բերդի Լևոն IV թագավորի շրջանին վերաբերող զինանշանի գույները: Քարի աջ, ձախ և վերևի եզրերին կա ազատ մի տարածություն, ուր պետք էր տեղադրվեին զինանշանի շուրջ եղող արձանագրությունը պարունակող քարերը: Սակայն, ինչպես երևում է, արձանագրությունը պարունակող քարերը չեն դրվել: Անավարտ մնացել Կամարտիաս բերդի դռան Հայոց թագավորի արձանագրությունը: Դռան վերևի մասում նախկինում եղել է այլ զինանշան և արձանագրություն: Դրանից պահպանվել է շրջանակի մեջ գտնվող (որպես հավերժության խորհրդանիշ)

երիցուկի մի ծաղիկ: Այժմ դա կարելի է տեսնել արձանագրության քարերի համար թողնված վերևի հորիզոնական ազատ տարածության անկյունում: Արձանագրությունն անավարտ կարող էր մնալ միայն բերդի գրավման պատճառով: Թագավորի ծալապատիկ նստելու դիրքից ու արձանագրության կիսատ մնալուց դատելով՝ կարելի է ասել, որ տվյալ բերդի և զինանշանի տերը եղել է Լևոն IV-ը (1320-1341 թթ.):

Շատ հավանական է, որ Կամարտիաս բերդի վերջին անկումը եղել է 1332 թվականին, երբ Լևոն IV-ի անձնական տիրույթի դռան վրա զինանշան և արձանագրություն էր տեղադրվում:

Բարեբախտաբար ահա այսպես պահպանվել են Կիլիկիայի հայոց մի թագավորի երեք պատկերները, երկուսը բերդերի դռների բարավորներին քանդակված, որպես սեփական տիրույթի նշաններ, իսկ երրորդը՝ Սարգիս Պիծակի 1331 թվականին «Անտիոքի օրինագրքում» նկարած մանրանկարում, ուր Լևոն IV-ը նախագահում է մի դատական նիստի: Ուշագրավ է, որ Լևոն IV-ի երեք պատկերներն էլ ստեղծվել են 1331-1332 թվականներին, անկասկած արքունիքին մոտ կանգնած նկարիչ Սարգիս Պիծակի կողմից: Լևոն IV-ի պատկերի կոմպոզիցիան, ըստ երևույթին, կատարվել է մանրանկարչի կողմից, որն առավել է զորացնում Թագավորաշեն և Կամարտիաս բերդերի նշանները կազմողի՝ Սարգիս Պիծակը լինելու մասին առկա կարծիքը: